«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ, 0069, ք. Երևան,
Դավիթ Անհաղթի փ., շ. 8/4
Հեռ.՝ +374 11 400 400
Էլհասցե՝ info@ucom.am
www.ucom.am

"Ucom" CJSC
Davit Anhaght St., bldg. 8/4
Yerevan, 0069, RA
Tel.: +374 11 400 400
E-mail: info@ucom.am
www.ucom.am

ЗАО "Юком"
ул. Давида Анахта, д. 8/4
г. Ереван, 0069, РА
Тел.: +374 11 400 400
Эл. почта: info@ucom.am
www.ucom.am

«ՅՈՒՔՈՄ» ՓԲԸ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ՀՐԱՄԱՆ 28.07.2025/08
«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ»-ՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 28.07.2025թ.

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ կետով, 3-րդ կետի «թ» ենթակետով, ինչպես նաև «Յուքոմ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրության 16.5.8-րդ կետով՝

Հրամայում եմ

1. «Էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներ և պայմաններ»-ի (այսուհետ՝ ԸԴՊ).

1.1. 7.5.8 կետը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.5.8. Յուքոմի կողմից մատուցվող ծառայությունները դադարեցվելու (այդ թվում՝ անկախ լուծման հիմքից պայմանագրի լուծման) կամ փոփոխվելու ժամանակ, սակայն ոչ ուշ, քան այդ սարքով մատուցվող ծառայությունը դադարելու հաջորդ օրվանից հաշված՝ 15 օրվա ընթացքում, Յուքոմի վաճառքի և սպասարկման կենտրոն վերադարձնել իրեն հանձնված Սարք(-եր)ը սարքին և պատշաճ վիճակում (ամբողջական կոմպլեկտայնությամբ)՝ հաշվի առնելով բնական մաշվածությունը: Սարք(-եր)ը վերադարձնելիս Բաժանորդի կողմից ստորագրվում է հանձնման-ընդունման ակտ:»:

1.2. 7.6 կետը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.6. Սույն Պայմանների 7.5.8. կետում նշված 15 (տասնհինգ)-օրյա ժամկետում Բաժանորդի կողմից Սարք(-եր)ը չվերադարձնելու կամ ոչ սարքին կամ ոչ պատշաճ վիճակում վերադարձնելու դեպքում Յուքոմն իրավունք ունի պահանջել, իսկ Բաժանորդը պարտավոր է վճարել այդ Սարքերի՝ https://www.ucom.am/unity-1 կայքում հրապարակված արժեքները:»:

1.3. Լրացնել նոր 7.6^1 կետով՝ հետևյալ խմբագրությամբ.

«7.6[1] Բաժանորդը հնարավորություն ունի օգտվել «Տեխնիկական սպասարկում» վճարովի ծառայությունից, որի շրջանակներում Բաժանորդի կողմից Յուքոմին հանձնման ենթակա Սարք(-եր)-ի ապամոնտաժումը կիրականացվի Յուքոմի կողմից: Ծառայության միանվագ արժեքն է՝ 4000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ): Վճարովի ծառայության շրջանակում Յուքոմի կողմից տրամադրված Սարք(-եր)-ի ապամոնտաժումը կիրականացվի Բաժանորդի դիմումը Յուքոմի վաճառքի և սպասարկման կենտրոն ներկայացնելու պահից 15-օրյա ժամկետում: Նշված ծառայությունից օգտվելու դեպքում Բաժանորդը պարտավոր է ապահովել կոնտակտային հեռախոսահամարների հասանելիություն՝ կապ հաստատելու համար և անխոչընդոտ մուտք տարածքներ՝ Սարք(-եր)-ի ապամոնտաժման համար:»:

2. Հրամանը և դրանով նախատեսված փոփոխություններն ու լրացումն ուժի մեջ են մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից:

Գլխավոր տնօրեն՝ Ռալֆ Յիրիկյան